ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Մասիս
Կենտրոնական հրապարակ թիվ 4
☎ (0236) 4-30-40, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

«01» 07 2022թ.

N 1044

ՍԻՄՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆ
ՊԵԳՈՐ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փափազյան,

Ի պատասխան Ձեր 2022 թվականի հունիսի 30-ի գրության՝ տեղեկացնում եմ, որ Մասիս համայնքը ողջունում է Սիմոնյան կրթական հիմնադրամի առաջարկը՝ Մասիս համայնքում Թումո կենտրոն կառուցելու գաղափարը և հայտնում բարձր պատրաստակամություն համագործակցելու ինչպես այս, այնպես էլ ցանկացած այնպիսի առաջարկ, որն ի նպաստ է համայնքի զարգացմանը և մատաղ սերնդի կրթությանը:

Ուսումնասիրելով առաջարկը, ինչպես նաև հաշվի առնելով մեր բանավոր պայմանավորվածությունը տեղեկացնում եմ, որ Ձեր կողմից ներկայացված առաջարկը կյանքի կոչելու համար Մասիս համայնքի Մասիս քաղաքի Հանրապետություն փողոցում, ավագ դպրոցի հարևանությամբ առկա է մոտ 7100 քմ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածք, որը համայնքը պատրաստակամ է նվիրաբերելու Սիմոնյան կրթական հիմնադրամին՝ Մասիս համայնքում Թումո կենտրոն կառուցելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով ծրագրի կարևորությունը, խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում Մասիսի համայնքապետարանին ներկայացնել պայմանագրի նախագիծ /Մասիս համայնքապետարանի և Ձեր միջև կնքվող/, որտեղ

կարտացոլվի ծրագրի մեկնարկի և ավարտի, ծրագրի հնարավոր շահառուների, կողմերի իրավունքների և պարտավորությունների մասին տեղեկատվություն: Նշված տեղեկատվության ստանալուց, համաձայնություն ձեռք բերելուց հետո կներկայացվի Մասիս համայնքի ավագանու հավանությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ